ՄԱՅՐԵՆԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

1

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՄԱՅՐԵՆԻ 1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի սովորողների համար

Երևան – 2024

ՀՏԴ ....
ԳՄԴ ...

Մայրենի 1 աշխատանքային գիրք-տետր/Ա.Վ. Միքայելյան, Ս. Ս. Պետրոսյան, Հ. Վ. Օհանյան/Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.-Եր.: Էդիթ Պրինտ, Երևան, 2024, 46 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ, Ա. Հ. Սվաջյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Հեղինակներ՝
Միքայելյան Ա. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ.Վ.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա. Ռ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Մայրենի» առարկայի ընթերցանության շրջանի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ ....
ԳՄԴ ...

Տպաքանակ՝ 150 օրինակ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

Նախաբան

Մայրենի 1 (ընթերցանության շրջան) աշխատանքային գիրք-տետրը հասցեագրված է առաջին դասարանում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին, նրանց ուսուցիչներին, ծնողներին և նպատակաուղղված է հետայբբենական շրջանի ու ընթերցանության դժվարությունները հետաքրքրաշարժ ու հարմարեցված առաջադրանքների կատարման միջոցով հաղթահարելուն: Մեր խորին համոզմամբ այն արդյունավետ կլինի նաև 2-րդ դասարանի առաջին քառորդում՝ կրկնության նպատակով:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս աշխատանքային գիրք-տետրում մշակել և ներկայացրել ենք տարաբնույթ առաջադրանքներ, որոնք կզուգակցվեն դասագրքերով կազմակերպվող աշխատանքներին: Առաջադրանքներն այնպես են կազմված, որ դրանց կատարման ընթացքում երեխան ոչ թե առանձնանա, այլ ընդհակառակը՝ ներառվի տվյալ թեմայի շուրջ կազմակերպվող ընդհանուր աշխատանքների մեջ: Դա է պատճառը, որ առաջադրանքների խոսքային նյութը գործող դասագրքերի բնագրերից ընտրված հատվածներ են, բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ:

Գիրք-տետրի առաջին 20 առաջադրանքը վերաբերում է հետայբբենական շրջանին և միտված է գրաճանաչության շրջանում աշակերտների կողմից հայերենի հնչյուն-տառերի (ձայնավոր և բաղաձայն), դրանցով ձևավորված վանկերի ընկալմանն ու տարբերակման կարողության զարգացմանը, բառում դրանց տեղի ճիշտ որոշմանը, նոր բառեր կազմելու, ինչպես նաև վերլուծահամադրական գործընթացների ձևավորմանը: Շարունակելով նաև գրաճանաչության շրջանի համար նախատեսված աշխատանքները՝ կենտրոնական տեղում դիտարկել ենք կարդալու և գրելու կարողության զարգացման շուրջ աշխատանքը: Այս խնդրի լուծման գործընթացում հաշվի ենք առել ԿԱՊԿ ունեցող երեխաների դժվարությունները, մասնավորապես 3 և ավելի վանկ ունեցող, բաղաձայնների կուտակումով բառերի կարդալու և գրելու ընթացքում, առանձին տառերի (նման) գրության դժվարությունները և այլն:

Գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների միջոցով շարունակվում է մի շարք ունակությունների ձևավորումը. իմաստավորել լսողությամբ կամ տեսողությամբ ընկալած բառերը, դրանք վերլուծել հնչյունների (ձայնավոր, բաղաձայն), կազմել և ընթերցել տարբեր կառուցվածք ունեցող բառեր՝ աստիճանաբար վանկայինից անցնելով ամբողջական բառերով ընթերցմանը, պահպանել կետադրական նշաններին համապատասխան առոգանությունը:

Ներկայացված առաջադրանքների մի մասի միջոցով էլ շարունակվում են խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները՝ պատասխանել բնագրի և նկարների շուրջ առաջադրված հարցերին, բնագրում գտնել տվյալ հարցին

պատասխանող նախադասությունը, ճշգրտել և հարստացնել բառապաշարը՝ նոր բառեր կազմելու, իմաստով մոտ և հակառակ իմաստ ունեցող բառերը ճանաչելու և վերջիններս խոսքում կիրառելու կարողության ձևավորման միջոցով: Առաջադրանքների մի խումբ էլ վերաբերում է նախադասություններ կազմելու, իմաստային տարբեր կառույցներ գործածելու կարողությունների զարգացմանը, հատուկ անուններում մեծատառի ճիշտ գործածությանը:
Աշխատանքային գիրք-տետրն ունի նաև հավելված, որի նյութերը կօգտագործվեն այս կամ այն առաջադրանքի կատարման ընթացքում: Նման առաջադրանքները խթանում են երեխայի հետաքրքրությունն ու ստեղծագործական երևակայությունը: Սովորողի զարգացմանը նպաստում է նաև միջառարկայական կապի պահպանումը, որը հնարավորություն է տալիս կրկնել, համադրել, համեմատել տարբեր առարկաներից ստացած տեղեկատվությունը:

Հայերենի այբուբենը

Մեսրոպ Մաշտոց

Հայերեն տառերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Մենք գրում ու կարդում ենք այդ տառերով:

1. Ցո՛ւյց տուր և անվանի՛ր տառերը:

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	Եվ և
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Օ օ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	Ֆ ֆ
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր	
Զ զ	Կ կ	Ո ո	Ց ց	
Է է	Հ հ	Չ չ	Ու ու	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ ջ	Ք ք	

2. Գծիկների վրա գրիր այբուբենի հերթական փոքրատառերը:

ա __ գ դ ե __ է __ թ ժ __ լ խ ձ __ հ
ջ ղ ճ __ յ ն __ ո չ __ պ ռ ս __ տ __
ւ ր փ ք և __ ֆ

3. Գծիկների վրա գրիր այբուբենի հերթական մեծատառերը:

Ա Բ __ Դ __ Զ __ Լ __ Ժ Ի __ Խ Ծ __
Հ Ձ Ղ Ճ __ Ջ __ Շ Ո Չ __ Պ __ __
Ս Վ __ Ւ Ռ __ Փ Քեվ Օ __

4. Տրված մեծատառի կողքին գրիր փոքրատառը, փոքրատառի կողքին՝ մեծատառը:

Բ __ Ե __ Է __ Ը __ Թ __ Խ __ Ծ __ Հ __ Ձ __ Ղ __
Ճ __ Յ __ Շ __ Ո __ Չ __ Ջ __ Վ __ տ __ Ց __ Ու __
Ք __ և __ օ __

5. ա) Անվանիր պատկերված առարկաները:








բ) Քանի՞ հնչյուն կա յուրաքանչյուր բառում: Կազմի՛ր այդ բառերը տառադարանի կտրատած տառերից:

6. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Գրի՛ր միայն այն անվանումները, որոնցում լսվում է ***ռ*** հնչյունը:



ռուկի, _____

_____

բ) Ընդգծի՛ր ***ռ*** տառը:

7. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Որոշի՛ր յուրաքանչյուր բառի առաջին հնչյունը:





բ) Տեղադրիր բառաքարտերը համապատասխան նկարի տակ (տես հավելված 1):

գ) Գրիր միայն 5 հնչյունից կազմված բառերը:

թութակ, _____

8. Արտագրիր բառերը: Հաշվիր և փակագծում գրիր տառերի քանակը:

Արա, զանգ, մայրիկ, գլուխ, ժպիտ, հնչյուն, ծաղիկ, լույս, ուսուցիչ

Արա (3) _____

_____

_____

9. Արտագրիր բառերը 3 շարքով:

լեզու, բառ, տառ, գնացք, տոն, գիրք, ժպիտ, վերջ, մայր, փուչիկ, կետ, դահուկ

3 տառ	4 տառ	5 տառ
բառ		

10. ա) Անվանի՛ր պատկերված կենդանիներին: Դրանց անվանումները կազմի՛ր տառադարանի կտրատած տառերով:










բ) Գրի՛ր միայն 4 տառից կազմված բառերը:

---

11. Կարմիր մատիտով գունավորի՛ր ձայնավորով փուչիկները:



12. Կապույտ մատիտով գունավորի՛ր բաղաձայնով փուչիկները:



13. Կապույտով գունավորիր բաղաձայններով շրջանները, կարմիրով՝ ձայնավորներով շրջանները:

Ա Փ Գ Ի Շ

Լ Օ Վ Ս Կ Ը

Է Տ Հ Դ Ու

14. Կարդա՛ բառերը: Ընդգծիր բաղաձայնները:

գիրք	տառ	էջ	վանկ	անուն
մարդ	բալիկ	կյանք	նկար	ճամփա

15. ա) Անվանիր պատկերված կենդանիներին: Լրացրու՛/տեղադրիր բաց թողնված տառերը:





__ատու __ի __իղ __այլ __ռյուծ __րջ __ագր

բ) Կարդա՛ ստացված բառերը: Ընդգծիր ձայնավորները:

16. Անվանիր պատկերված նկարները: Գունավորիր այն նկարը, որի անվանումը սկսվում է ձայնավորով:



17. Բառաշարքից արտագրիր ձայնավորով վերջացող բառերը:

Արա, երկինք, արև, կատու, ընկեր, լեզու, բարի, անձրև, Անի

_____

_____

18. Արտագրիր ձայնավորով սկսվող նախադասությունը:

Հայերենի այբուբենը ստեղծել է Մաշտոցը:

Արան դաս է սովորում:

_____

19. Արտագրիր այն նախադասությունը, որի բոլոր բառերը սկսվում են բաղաձայնով:

Սիրամարգը գեղեցիկ փետուրներ ունի:

Մեր պարտեզում ծաղիկներ կան:

_____

20. Կարդա՛ բառազույգերը: Գրիր 2-րդ բառում կորած տառը:

սարդ - սար ___դ___

աշուն - շուն _____

մուրճ - մուր _____

գիրք - գիր _____

կարթ - կաթ _____

հավք-հավ _____

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

21. Գծով միացրու նկարը համապատասխան գծապատկերին:



հ	ե	ռ	ա	խ	ո	ւ

գ	ի	ր	ք

դ	պ	ր	ո	ց

ռ	ս	ռ	ց	ի	ջ

և	ա	պ	ա	ս	գ	ա	կ

22. Տրված բառերն արտագրիր համապատասխան տողի վրա:

թև, ճամփա, գույն, ուսուցիչ, սեր, հայրենիք, մայրենի

2 տառ թև

3 տառ _____

4 տառ _____

5 տառ _____

6 տառ _____

7 տառ _____

8 տառ _____

23. Կարդա՛: Ընդգծի՛ր ամենաերկար բառը և վանկատի՛ր կորագծերով:

Ձմեռվա բուքին,
Սառնամանիքին
Դպրոցի ճամփան
Դժվար է, երկար՝
Շատերի համար:

24. Կարդա՛: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

Զվարթ գարունքին,
Երգին ու ծաղկին
Դպրոցի ճամփան
Կարճ է, դուրալի՝
Կարծես ավելի:

25. Կարդա՛: Ընդգծի՛ր ամենակարճ բառը/բառերը:

Իսկ ով սեր ունի
Մեզ պես ուսումի,
Դպրոցի ճամփան
Միշտ կարճ է, սիրուն՝
Ձմեռ թե գարուն:

26. Տրված ձեռագիր մեծատառի կողքին գրի՛ր համապատասխան փոքրատառը:

Ահ _____ Ղ _____ Հ _____

Բ _____ Ե _____ Ը _____

Գ _____ Զ _____ Թ _____

27. Տրված տպագիր մեծատառի կողքին գրի՛ր համապատասխան փոքրատառը:

Ա _____ Դ _____ Է _____

Բ _____ Ե _____ Ը _____

Գ _____ Զ _____ Թ _____

28. Տրված ձեռագիր փոքրատառի կողքին գրի՛ր համապատասխան մեծատառը:

ճ _____ ն _____ հ _____

մ _____ շ _____ չ _____

յ _____ ռ _____ պ _____

29. Տրված տպագիր փոքրատառի կողքին գրի՛ր համապատասխան մեծատառը:

ջ _____ վ _____ g _____ ք _____

ռ _____ տ _____ ու _____ օ _____

ս _____ ր _____ փ _____ ֆ _____

30. ա) Կարդա՛: Նախադասություններից արտագրի՛ր մարդկանց անունները:

Հիշի՛ր՝ մարդկանց անունները գրվում են մեծատառով:

-Գարունը ամպերն են բերում,- ասում է Արան:

-Գարունը ծաղիկներն են բերում,- ասում է Հայկը:

-Գարունը արևն է բերում,- ասում է Արևիկը:

-Գարունը դո՛ւք եք բերում, սիրելի՛ մանուկներ,- ասում է Արամ պապիկը:

Հրա _____

բ) Անվանի՛ր երեխաների անունների առաջին հնչյունը: Գրի՛ր դրա տառը:

Հ

_____

_____

31. Գրի՛ր ձայնավորով սկսվող 2 աղջկա և 2 տղայի անուն:

_____

32. Գրի՛ր քո ընկերների անունները:

_____

_____

_____

33. Նկարները համարակալիր այնպես, որ հաջորդ նկարի անվանումը 1 հնչյունով ավելի լինի: Լրացրու վանդակները:



34. Արտագրիր բառերը՝ յուրաքանչյուրի կողքին գրելով տառերի քանակը.

մայրիկ, հարց, մեղմ, երեք, ոտք, արև, գրիչ

մայրիկ (6)

35. Կարդա՛: Արտագրիր 4 տառից կազմված բառերը.

ծառ, կատու, որսորդ, ծիտ, տանձ, ծիտ, բարձր,
քամի, արև, աչք, ձեռք, դրոշ, երգ, գրոհ

36. Հաշվիր և բառերի կողքին գրիր՝ քանի՞ ձայնավոր կա:

տուն __1__, տունը ___, քաղաք ___, քաղաքը ___,

գյուղ ___, գյուղը ___, ծառ ___, ծառը ___

37. ա) Արտագրիր գարնան ամիսները ճիշտ հերթականությամբ.

մայիս, ապրիլ, մարտ

_____

բ) Ասա՝ ո՞ր ձայնավորն է կրկնվել բոլոր բառերում: Ընդգծիր այն:

38. ա) Կարդա՛ բառազույգերը: Ասա՛ ո՞րն է դրանց տարբերությունը:

օր -օրը

գիրք-գիրքը

աչք-աչքը

գործ-գործը

ծաղիկ-ծաղիկը

գույն-գույնը

դպրոց-դպրոցը

բ) Առաջին շարքի բառերի հետ գործածիր *մի* բառը, երկրորդ շարքի բառերի հետ՝ *իմ* բառը:

39. Խառնված տառերից ստացիր համապատասխան նկարի անվանումը և գրիր:





տճու _____ տգե _____ գսա _____ արվդ _____

40. ա) Գծիկի վրա գրիր բ տառը, ստացիր բառ և կարդա՛:

___ու, ___ադ, ___ալ, ___առ, ___ակ, ___արի,

___արդի, ___անակ

բ) Հաշվիր և ասա՛ տառերի քանակը յուրաքանչյուր բառում:

41. Արտագրիր նախադասությունները: Ընդգծիր ***ռ, ր*** բաղաձայնները:

Կռունկը թռչուն է:

Աննայի կրունկը ցավում է:

Տառը գրում են:

Անին լուռ լսում է:

Արան լավ լուր ասաց:

42. ա) Գծիկի վրա գրիր ***ր*** կամ ***ռ,*** ստացիր բառ և կարդա՛.

նու___, սա___, դու___, քա___, սու___, ____ոպե,

___ետին, ամա___, նկա___, անտա___, պանի___

բ) Հաշվիր և ասա՛ տառերի քանակը յուրաքանչյուր բառում:

43. Գծիկի վրա գրիր տրված տառերից մեկը և ստացիր բառ: Կարդա՛ այն:

Ա___ի (ն, մ)

___ուկ (ձ, g)

___իտ (ձ, ծ)

տան___ (g, ձ)

ծա___ (ռ, ր)

44. Կատարիր թվաբանական գործողությունները և գրիր ստացված բառերը:

ս + ա + գ = _____

վ+ ա + ր + դ = _____

Ան + նա = _____

աղ + վես = _____

ժ + պիտ = _____

մայ +րիկ = _____

զառ - ռ + ն + գ = _____

ու + սում -մ + ցիչ = _____

45. Կարդա՛ ասացվածքը: Կարմիր մատիտով ընդգծիր ձայնավորները:

Պարծենկոտի մեջը փուտ է,

Ինչ որ ասի, կեսը սուտ է:

46. Կարդա՛: Դուրս գրիր *ա* ձայնավորով սկսվող բառերը:

Արևից ծովի ջուրը երկնքում ամպ է դառնում: Հետո ամպի ջուրն անձրև է դառնում:

_____

47. Կարդա՛: Կարմիր մատիտով ընդգծի՛ր բոլոր ձայնավորները:

Կար ու չկար մի գիրք կար, որն ընթերցող էր փնտրում: Նա գնաց անտառ: Հանդիպեց նապաստակին…

48. Կարդա՛: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

Գրիչ

-Ինչ կլինի, ասա՛, գրի՛չ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ:
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին,
Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմզում ես
Սև ագռավի ճանկերի պես:

49. Բառաշարքից արտագրի՛ր այն բառերը, որոնցում 2 բաղաձայն իրար կողքի են:

Անի, ամպ, գետակ, ջուր, մարդ, կենդանի, սար, կամուրջ, միրգ, բույն, կռունկ

օրինակ՝ ամպ

_____

_____

50. Բառաշարքից արտագրի՛ր այն բառերը, որոնցում 3 բաղաձայն իրար կողքի են:

Ծով, գնդակ, ծառ, ամպ, անձրև, ճյուղ, հեռախոս, խնդրանք, բարձր, թռչուն

օրինակ՝ գնդակ

_____

_____

51. ա) Գծով միացրու բառը համապատասխան նկարին:



ռետին կատու մատիտ գիրք քանոն գրիչ

բ) Ո՞ր բառն է ավելորդ: Գրի՛ր այն:

_____

52. ա) /Լրացրու բաց թողած ձայնավորը:



___ղվես գ___յլ եղն___կ ար___գիլ աքլ___ր ծ___ծեռնակ

բ) Ո՞ր բառն է ավելորդը: Գրի՛ր այն:

_____

53. Արտագրի՛ր բառերը 2 շարքով.

բու, մատիտ, բազե, կռունկ, դասագիրք, գրիչ, ռետին, ծիծեռնակ, արագիլ, տետր, քանոն, թութակ

Թռչուն	Գրենական պիտույք
բու	մատիտ

54. Կարդա՛ տրված բառերն առանց առաջին բաղաձայնի: Գրի՛ր ստացված նոր բառերը:

մսուր, նկար, մարտ, մաղ, բլուր, բարի, խոտ, փշատ, գիր, կուժ

---

55. Կարդա՛ ասացվածքը: Ընդգծի՛ր *ե* տառը: Որոշի՛ր՝ ո՞րերորդն է բառում:

Մի՛ լինիր ուրագի պես՝
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Այլ եղի՛ր սղոցի պես՝
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

56. Գուշակի՛ր հանելուկը: Որոշի՛ր՝ քանի՞ հնչյունից է կազմված պատասխան-բառը:

Լեզու չունի՝ խոսում է,
Ականջ չունի՝ լսում է:
Թե հարկ լինի կհնչի,
Նա քեզ իր մոտ կկանչի:

57. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր միայն *է*-ով սկսվողները:

Էմմա, կետ, էջ, բեռ, լեռ, էշ, էկրան, Էմիլ, ելակ, երեք, էսկիմո

---

58. Կարդա՛ բանաստեղծությունը: Ընդգծի՛ր բառասկզբում *ո* տառ ունեցող բառերը:

Արջուկները

Փոքրիկ արջուկն անտառի մեջ
Հանկարծ ջարդեց ոտը,
Շատ լաց եղավ խեղջ արջուկը,
Ոչ ոք չկար մոտը:

59. Կարդա՛: Ընդգծի՛ր ***օ*** տառը: Որոշի՛ր նրա տեղը բառում:

Ա՜խ, էսպես էլ գիժ ամիս,
Մարդու հանգիստ չի տալիս:
Էսօր ուրախ օր կանի,
Վաղը՝ անձրև ու քամի:
Առավոտը պայծառ օդ,
Կեսօրը՝ մութ ու ամպոտ:

60. Բառաշարքից արտագրի՛ր ***օ*** -ով սկսվող բառերը.

զով, օղ, խոզ, օտար, օր, մոշ, խնձոր, օդ, լոլիկ, օձ, կով, օրագիր, սալոր, օրացույց, օրենք

օղ

61. Արտագրի՛ր բառերը՝ խմբավորելով.

ելակ, ոզնի, ոսկի, ոչխար, երազ, երես, երկու, որակ, ոսկոր, եղինջ, երթ, ոտք, որդ, երեկո, երգ, ոլոռ, ոսպ, եղնիկ

ե **-ով սկսվող**	***ո*** **-ով սկսվող**
ելակ	ոզնի

62. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր ***ո*** տառով սկսվող մարդկանց անունները:

Օֆելյան ու Ոսկեհատը սովորում են առաջին դասարանում:

Վարպետ Ոսկանը նորոգեց կոտրված աթոռը:

Որսորդը վազում էր գայլի հետևից:

Ոզնին շատ սուր փշեր ունի:

---

63. Կարդա՛ մարդկանց անունները: Արտագրի՛ր ***ո*** տառ ունեցողները.

Վահան, Գոհար, Ոսկան, Գոռ, Հայկ, Լուսինե, Սոնա, Ոսկեհատ

---

64. Կարդա՛ մարդկանց անունները: Արտագրի՛ր ***ե*** տառ ունեցողները.

Գոհար, Երեմ, Մանե, Երազիկ, Արեգ, Լուսինե, Կառլեն, Վարդան, Երանուհի

---

65 ա) Նույն գույնն ունեցող վանկերը միացրո՛ւ և ստացված բառերը տեղադրի՛ր համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 2):



բ) Գրի՛ր բաղաձայնով սկսվող բառերը:

66. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը:

Աշխատում է օրնիբուն
Մի գեղեցիկ մեքենա.
Ով որ նրան չնայի,
Ամեն բանից կուշանա:

ժա

մա

ցույց

67. Կարդա՛: Տնակում արտագրի՛ր 2 ձայնավոր ունեցող բառերը.

ամիս, անուշ, ամպ, քամի, աշուն, ճյուղ, հորդ, անձրև, ընկեր, կատակ, գիրք, ալյուր, հաց, դասարան



68. Կարդա՛ առածը: Արտագրի՛ր ձայնավորով վերջացող բառերը:

Խոսքը՝ մեծին, ջուրը՝ փոքրին:

69. Բառաշարքից արտագրիր այն բառերը, որոնք սկսվում և վերջանում են ձայնավորով.

Անի, բու, ամպ, հայելի, Արա, բանալի, ոզնի, Արամ, գաթա, Աննա, ընտանի, ապակի, մայր

Անի, _____

_____

70. Կարդա՛/լսիր հանելուկները: Պատասխան-բառում գրիր անհրաժեշտ ձայնավորը:

Հենց որ ձմեռն է իջնում,
Թաթը գրկում է, ննջում: ___ րջ (ա, է)

Ինքը ջրի բերած է,
Ջրից հանես՝ կորած է: Ձ ___ կ (ա, ու, ի)

71. Կարդա՛ բառազույգերը: Գրիր կրկնվող տառը.

նուռ - ջուր ___ռ___

զանգ - խաղ _____

գիրք - տետր _____

ծաղիկ - գրիչ _____

գիրկ - ջերմ _____

դպրոց - ուսուցիչ _____

72. Փոխիր 1 ձայնավոր և կազմի՛ր նոր բառեր: Գրիր դրանք.

սար	ատր	տող	_____
տուն	_____	մեկ	_____
լար	_____	վազ	_____

73. Բառաշարքից արտագրիր բաղաձայնով վերջացող բառերը.

Սարգիս, ծիածան, երգել, օգնել, հոգնել, երեք հայրիկ, Կարինե, աշխարհ, Լուսինե, դպրոց, թռչուն, երամ

Սարգիս, _____

_____

_____

74. Բառաշարքից արտագրիր այն բառերը, որոնք սկսվում և վերջանում են բաղաձայնով.

Սամվել, նկար, Սարո, Արա, ընկեր, հայր, նշան, բութ, անձրև, Արևիկ, ընտանիք, ուսուցիչ, ձնծաղիկ

Սամվել, _____

_____

_____

75. ա) Արտագրիր շուտասելուկը՝ յուրաքանչյուր բառի կողքին գրելով բաղաձայն ու ձայնավոր հնչյունների քանակը:

Բադը (2, 2) կատվին կտցեց,
Տատը բադին պատժեց:



_____

_____

բ) Կրկնիր շուտասելուկը:

76. Կարդա՛ բառերը: Հաշվիր տառերի քանակը և գրիր համապատասխան թիվը.

երեխա	5	մեխակ	_____
ես	_____	երկիր	_____
մայրիկ	_____	երեկ	_____
հայրիկ	_____	երեկո	_____

77. Գրի՛ր **ե**-ով սկսվող թվանշանների անվանումները:.

4 **2** **5** **3** **7** **9**

78. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Տեղադրի՛ր բառերը համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 3):



4

կատու



3



բ) Որոշի՛ր յուրաքանչյուր բառի տառերի քանակը: Քառակուսու մեջ գրի՛ր թիվը:

79. Լրացրո՛ւ վանդակները:

	ա	ղ	վ	ե	ա

80. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը: Գրի՛ր պատասխան-բառը, կողքին՝ բաղաձայնների ու ձայնավորների քանակը:

Սև է՝ սաթի նման,
Կուրծքն է սպիտակ՝
Կաթի նման,
Պոչը՝ մկրատի նման:

_____

81. Անվանումները գծով համապատասխանեցրո՛ւ կետադրական նշաններին:

վերջակետ

ստորակետ

միջակետ

բութ

հարցական նշան

շեշտ

՝ ։ ՞ ։ , ՛

82. Կարդա՛ քառատողը: Անվանի՛ր կետադրական նշանները:

Այս ի՞նչ կծած խնձոր է
Մեր ծառին աճել
Տեսնես՝ ո՞վ չի համբերել.
Ախր, դեռ խակ է:

83. Կարդա՛ ծաղիկների անվանումները: Արտագրի՛ր բառի միայն բաղաձայնները:

կակաչ, վարդ, մանուշակ, խատուտիկ, զանգակ, ձնծաղիկ, մեխակ

կ-կ-չ.

_____

84. ա) Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Արտագրի՛ր՝ յուրաքանչյուր բառի կողքին գրելով բաղաձայն ու ձայնավոր հնչյունների քանակը:

Իմ (1,1) անուշիկ մայրիկին,
Քաղցր ու սիրուն մայրիկին
Ի՞նչ նվիրեմ թանկագին՝
Մայրիկների այս տոնին:

_____

_____

_____

_____

բ) Ասա՝ իսկ դու ի՞նչ ես նվիրել քո մայրիկին:

85. Գրի՛ր տառերից մեկը սկզբում և կարդա՛ ստացված բառը.
(վ, շ, պ, հ, մ, պ)

___ ատ ___ ատ ___ ատ ___ ատ ___ ատ

86. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Տեղադրի՛ր բառերը համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 4):











բ) Գունավորի՛ր այն քառակուսին, որում պատկերված առարկայի նկարի անվանումը 6 հնչյուն ունի:

87. Լրացրու վանդակները:

88. ա) Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

Մեղուն դաշտի հոտն առավ,
Տաք փեթակից դուրս թռավ,
Ծաղկի բաժակը գրկեց,
Ուրախացավ ու երգեց:

բ) Քառատողից գտի՛ր և ասա՝ որտեղ է ապրում մեղուն:

89. Լրացրու դատարկ վանդակները և կարդա՛ ստացված բառերը.

հ	ա	վ
կ		
լ		
ց		
ն		
գ		
թ		

90. Գրի՛ր տրված տառերից մեկը սկզբում և կարդա՛ ստացված բառը.

(պ, հ, շ, դ, փ, ց, ք)

___ ող

___ ող

___ ող

___ ող

___ ող

___ ող

___ ող

91. Կարդա՛ բառազույգերը: Գրի՛ր ավելացած տառը:

լավ-փլավ	փ	կար- նկար	_____
աղ-մաղ	_____	որդ-հորդ	_____
նավ-նավթ	_____	արև-բարև	_____
ուր-ջուր	_____	թոռ-աթոռ	_____
յուղ-ճյուղ	_____	որս-չորս	_____

92. Լրացրո՛ւ դատարկ վանդակները և կարդա՛ ստացված բառերը.

բ	ա	կ
		դ
		ռ
		լ
		ր
		հ
		շ

93. Նկարները խմբավորիր սյունակներում (տես հավելված 5): Անվանիր դրանք:

Միրգ	Կենդանի

94. Կարդա՛/լսիր, որոշիր հանելուկների պատասխանները և գրիր:

Ո՞ր թռչունն է գույնզգույն,
Որ մեզ կրկնում է իսկույն:

_____

Կա մի հսկա կենդանի,
Եվ խելացի, և բարի,
Յոթը տարին մի անգամ
Ձագ է տալիս աշխարհին:



_____

Հավատարիմ ընկեր է,
Տանը պահակ ու տեր է,
Վազվզելուց չի հոգնում,
Իր տիրոջն է միշտ օգնում:

_____

95. Արտագրիր բառերը համապատասխան ամպիկներում.

բալ, խնձոր, գայլ, ռետին, աղվես, տանձ, քանոն, փիղ, գրիչ, խաղող, գիրք, դեղձ, տետր, շուն, կով

միրգ

կենդանիներ

գրենական պիտույքներ

96. Կարդա՛ տարվա եղանակների անվանումները: Արտագրիր ճիշտ հաջորդականությամբ.

ձմեռ, աշուն, գարուն, ամառ

---

97. Լրացրու դատարկ վանդակները և կարդա՛ ստացված բառերը.

գ	ա	ռ
կ		
բ		
ֆ		
թ		
վ		
կ		

98. Կարդա՛ բառերը: Արտագրի՛ր ☐☐☐☐☐ գծապատկերին համապատասխանող բառերը.

Նուշիկ, զամբյուղ, գեղեցիկ, ծաղիկ,ագռավ, ծիծեռնակ, սոխակ, թութակ

99. ա) Արտագրի՛ր բառերը: Ընդգծի՛ր ***և*** տառը:

Արև, տերև, թև, եղևնի, Սևան, սերկևիլ, հարևան, բարև, արևածաղիկ

բ) Դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ և գրի՛ր:

100. Արտագրի՛ր բառերը՝ խմբավորելով.

Սևան, տերև, թև, ձև, Լևոն, եղևնի, սև, Սևակ, երևալ, բարև, վերև, թեթև

և -ը բառամիջում	***և*** -ը բառավերջում
Սևան	տերև

101. Դատարկ վանդակներում գրիր **և** տառը և կարդա՛ բառերը:



102. Կարդա՛ նախադասությունները: Արտագրիր ☐☐☐☐ գծապատկերին համապատասխանող բառերը.

Արթնանալուց հետո բոլորին ասա՝ բարի լույս:
Քնելուց առաջ բոլորին ասա՝ բարի գիշեր:

_____

_____

103. Կարդա՛ շաբաթվա օրերի անվանումները: Արտագրիր ճիշտ հաջորդականությամբ.

երկուշաբթի, շաբաթ, հինգշաբթի, ուրբաթ, չորեքշաբթի, կիրակի, երեքշաբթի

_____

_____

104. Կարդա՛ պատմությունը: Ընդգծիր **և** ունեցող բառերը:

Ամռան տաք օրերին բացվում են արևածաղիկները: Կանաչ տերևների միջից նրանք բարձրացնում են գլխիկները և նայում արևին: Նրանք այդպես բարևում են հարևաններին:

105. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր Հասմիկի ասած նախադասությունները:

Հասմիկը նոր էր սովորել, թե ի՛նչ է վանկը: Դրանից հետո նա բառերը վանկերի էր բաժանում: Մեկ-մեկ էլ խոսում էր վանկերով.

-Մայ-րի՛կ, կա-րե-լի՞ է գը-նալ բակ:

Մի անգամ էլ հայրը մի սեխ բերեց: Հասմիկը սեխ շատ էր սիրում և ասաց.

-Իմ լա՛վ հայ-րիկ, ի՞նչ լավ ես ա-րել, որ սեխ ես բե-րել:

_____

_____

_____

106. Կատարի՛ր թվաբանական գործողությունները, ստացի՛ր բառեր և գրի՛ր:

Հաս + միկ = _____

մայ + րիկ = _____

հայ + րիկ = _____

կա + տակ = _____

դա + նակ = _____

ամ + բողջ = _____

խո + րա + մանկ = _____

107. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր դրանք համապատասխան սյունակներում.

ծիծեռնակ, մեխակ, շուշան, արագիլ, կակաչ, սոխակ, կռունկ, վարդ, ագռավ, մանուշակ

Թռչուններ	Ծաղիկներ

108. Որոշի՛ր՝ քանի՞ վանկից են կազմված պատկերված կենդանիների անվանումները: Կից շրջաններում գրի՛ր համապատասխան թիվը:



109. Կարդա՛: Արտագրի՛ր միավանկ բառերը.

զատիկ, օր, տատիկ, շուկա, թոռ, ուրախ, շատ, երեխա, տոն, աղմուկ, ձու, հույս, սառնարան, տուն, խոհանոց, լույս, քիթ

_____

_____

110. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

Զինվոր եմ ես,
Քայլում եմ, տե՛ս
Զենքեր ունեմ,
Զենքեր պես-պես:

111. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր միավանկ բառերը:

Տանկ էլ ունեմ
Իմ գրպանում.
Ափսոս, կարգին
Ձայն չի հանում:

112. Միացրո՛ւ համապատասխան վանկերը, ստացի՛ր բառեր և գրի՛ր.



համբույր

113. Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Ընդգծի՛ր կողք կողքի 3 բաղաձայն ունեցող բառերը:

Ինձ չլսեց ձկնիկը,
Ինձ չլսեց բկլիկը,
Հո՛պ, կուլ տվեց նա որդը,
Կարթը մնաց կոկորդը:

114. Գրի՛ր հաջորդող բառը.

շաբաթ _____կիրակի_____

նախաճաշ _____

երկու _____

գարուն _____

աշուն _____

հունվար _____

երեկո _____

115. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր ☐☐☐☐☐ գծապատկերին համապատասխանող բառերը.

Առավոտյան, երբ խատուտիկը բացվում է, մարգագետինը դեղին զգեստ է հագնում: Իսկ երեկոյան, երբ խատուտիկը փակվում է, մարգագետինը նորից կանաչ է հագնում:

_____

բ) Գրի՛ր պատասխանները:

Մարգագետինը ի՞նչ գույնի զգեստ է հագնում.

Առավոտյան _____

Երեկոյան _____

116. Արտագրի՛ր տառերի խումբը համապատասխան վանդակներում և ստացի՛ր բառեր: Կարդա՛ դրանք:

հ	ա	յ					
հ	ա	յ					
հ	ա	յ					
հ	ա	յ					
հ	ա	յ					

ոչ

կ

երեն

ուհի

ասպան

117. Անվանիր պատկերված կենդանիներին՝ վանկատելով: Հաշվիր և քառակուսիներում գրիր վանկերի քանակը:



118. Կարդա՛ տրված բառերը, բաժանիր վանկերի: Արտագրիր ***րի*** վանկն ունեցողները.

Նարե, Մարի, գիրք, բարի, զինվոր, տարի, հայրենիք, կարմիր, գարի, Նաիրի

Մարի, _____

_____

119. Արտագրիր միավանկ բառերը սրտիկներում, բազմավանկը՝ ամպիկներում.

Հայաստան, տանկ, ձի, ատամ, երգ, ասֆալտ, աչք, հայ



120. Տրված վանկերից ստացիր բառեր և գրիր:

ղուն, ցո	ցողուն	ղու, մե	_____
մատ, ար	_____	տիկ, զա	_____
ղիկ, ծա	_____	ծակ, մո	_____
թեռ, թի	_____	րև, տե	_____

121. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր 2 վանկ ունեցող բառերը:

Գունավոր է ու սիրուն
Հայաստանում ամեն քար:
Հովիվն էլ է զարմանում.
Ո՞րն է ծաղիկ, ո՞րը՝ քար:

122. Կարդա բառերը: Ընդգծի՛ր կրկնվող վանկը.

կոճակ, կոշիկ, կորիզ, կոպիտ, կոկիկ, կողով, կոտոշ

123. Կարդա՛ ասացվածքը: Բառերը կորագծերով բաժանի՛ր վանկերի:

Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:

124. Կարդա՛ հանելուկը: Վանկատի՛ր բառերը կորագծերով: Պատասխան-բառը գրի՛ր վանկատած:

Կենդանի է նա մաքրասեր,
Շատ է սիրում մածուն ու սեր,
Լվացվում է շատ խնամքով,
Սակայն՝ միայն ճաշից հետո:

_____

125. Արտագրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերը ճիշտ տեղերում.

բարակ, երկար, փոքր, ցածր, մոտ, նեղ

մեծ ___փոքր___
հեռու _____
հաստ _____
կարճ _____
բարձր _____
լայն _____

126. Տրված բառերը արտագրիր համապատասխան տողի վրա:

շինարար, հացթուխ, հովիվ, ուսուցիչ, բժիշկ

Ոչխարներ արածեցնող մարդ _____ հովիվ _____

Հիվանդներ բուժող մարդ _____

Շենքեր կառուցող մարդ _____

Հաց թխող մարդ _____

Սովորեցնող մարդ _____

127. Ընդգծիր համապատասխան բառը.

թեյ - մարդ, կահույք, ըմպելիք, միրգ

խնձոր - բանջարեղեն, ծառ, միրգ, կենդանի

կանաչ - բույս, միրգ, գույն, մարդ

շուն - կահույք, բույս, ուտելիք, կենդանի

խոհանոց - ըմպելիք, միրգ, սենյակ, հագուստ

128. Տրված բառերի կողքին արտագրիր իմաստով մոտ բառերը.

սիրուն, մեծ, նախշուն, հիմար, փոքրիկ

գեղեցիկ - _____ նախշուն _____

խոշոր - _____

գույնզգույն - _____

անխելք - _____

պստլիկ - _____

129. Կարդա՛ կենդանիների ձագուկների անվանումները: Արտագրի՛ր համապատասխան կենդանու նկարի տակ.

ճուտիկ, հորթ, գառնուկ, փիսիկ









_____ _____ _____ _____

130. ա) Կարդա՛ ամիսների անվանումները: Արտագրի՛ր ճիշտ հաջորդականությամբ.

հունվար, ապրիլ, մարտ, հունիս, հոկտեմբեր, մայիս, փետրվար, նոյեմբեր, օգոստոս, սեպտեմբեր, հուլիս, դեկտեմբեր

_____

_____

_____

բ) Ասա՛ քո սիրած ամիսը: Պատմի՛ր դրա մասին:

131. Կարդա՛ քառատողը: Արտագրի՛ր ☐☐☐☐☐☐☐ գծապատկերին համապատասխանող բառերը.

Գիրք կարդալով՝ դու գրքերում
Շատ նորանոր բան կիմանաս,
Շատ շատերից շատ բաներում
Մտքով հեռու կսլանաս:

_____

_____

132. Կարդա՛ ծառերի անվանումները: Արտագրի՛ր 3 վանկ ունեցողները:


նռնենի

բալենի

տանձենի

դեղձենի


սալորենի

թզենի


ծիրանենի

ընկուզենի

նռնենի,

133. Տրված խառը վանկերից ստացի՛ր բառեր և գրի՛ր:

յաս, տան, Հա	հայաստան
տեզ, պար	
ձոր, խն	
նի, ոզ	
լու վոր, սա	
րե, ե, կո	
րե, ե, խա	

134. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Արտագրի՛ր ***ե*** տառով սկսվող բառերը:

Երբ քույրիկս,
Երբ մայրիկս
Ու հայրիկս
Գալիս են տուն,
Ներս են մտնում
Երեք մե՛ծ-մե՛ծ
Ուրախություն:

135. ա) Կարդա՛ տեքստը: Գտի՛ր և ընդգծի՛ր ***ընթրիք*** բառը:

Նապաստակն ու իր ձագը զբոսնում էին բանջարանոցում: Թփերի տակ մի մեծ գազար տեսան:

-Ա՜յ քեզ բախտ,- ուրախ ծափ տվեց փոքրիկը:

-Սա մեր երեկոյան ընթրիքը կլինի,- ասաց մայրը: - Օգնի՛ր ինձ, սիրելի՛ս, ընթրիքը միասին տուն տանենք:

բ) ***Ընթրիք*** բառով կազմի՛ր նախադասություն և գրի՛ր:

_____

136. Փակագծում տրված բառերից արտագրի՛ր համապատասխանը:

Ամռան ամիս է:	_____	(հունվար, մայիս, հուլիս)
Տարվա եղանակ է:	_____	(առավոտ, ապրիլ, գարուն)
Շաբաթվա օր է:	_____	(արձակուրդ, երեկո, շաբաթ)
Օրվա ժամանակ է:	_____	(ամիս, երկուշաբթի, կեսօր)

137. ա) Կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր.

հետաքրքիր		հետաքրքիր գիրք
լուսավոր		_____
գեղեցիկ		_____
խորամանկ		_____
անուշահոտ		_____

բ) Դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ և գրի՛ր:

_____

_____

_____

_____

138. Ընդգծիր համապատասխան բառը:

Ինչպիսի՞ն է աշունը (շոգ, ոսկեզօծ)

Ինչպիսի՞ն է ծաղիկը (ծանր, անուշահոտ)

Ինչպիսի՞ն է քարը (ամուր, քնքուշ)

139. Կարդա՛ նախադասությունները: Արտագրիր բառակապակցությունները:

Պապը բերեց կարմրաթշիկ խնձոր:

Տատը ուներ թեթև գլխացավ:

Թոռը հիվանդ տատին տվեց խնձոր:

կարմրաթշիկ խնձոր

140. Կարդա՛ բառազույգերը: Ընդգծիր փոխված տառերը:

սուր-զուր	թուփ-տուփ	գետ-կետ
սրահ-զրահ	դուր-թուր	գիրկ-գիրք
զտել-ստել	դեղ-տեղ	գայլ-քայլ

141. Կարդա՛/լսիր պատմությունը: Ընդգծիր 3 բառակապակցություն:

Աղվեսը մի գրոտած թուղթ գտավ, տարավ սոված գայլին ու ասաց.

-Շա՜տ չարչարվեցի, մինչև իշխանն այս թուղթը տվեց: Այս թուղթը ցո՛ւյց տուր, քեզ մի ոչխար կտան:

Խորամանկ աղվեսն այդպես խաբեց գայլին: Գայլը, թուղթը ձեռքին, մտավ գյուղ: Իսկ գյուղում գազազած շները վրա հասան ու գզեցին նրան: Աղվեսը հարցրեց.

-Ինչո՞ւ թուղթը ցույց չտվեցիր:

Վիրավոր գայլը պատասխանեց.

-Ցույց տվեցի, բայց շները կարդալ չգիտեին:

142. Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր փոխված բառերը:

Տատիկը հիվանդացավ:	Տատիկը առողջացավ:
Նուշը դառն էր:	Նուշը քաղցր էր:
Պապիկի զամբյուղը ծանր էր:	Պապիկի զամբյուղը թեթև էր:
Արայի գնդակը մեծ էր:	Արայի գնդակը փոքր էր:
Ես շատ տխրեցի:	Ես շատ ուրախացա:

143. ա) Կարդա՛ նախադասությունները: Որոշի՛ր բառերի քանակը և գունավորի՛ր համապատասխան թիվը:

Լուսիկն ու Սուսիկը երկվորյակ քույրեր են: 5 6 7

Սուսիկը խաղում էր ջրի հետ: 5 6 7

Լուսիկը սովորել էր դասերը, ջրել էր ծաղիկները: 5 6 7

բ) Ընդգծի՛ր մարդկանց անունները:

144. Նշի՛ր այն նախադասության շրջանը, որը համապատասխանում է նկարին:

Հայկը երգում է: ◯

Սոնան պարում է: ◯

Գևորգը նկարում է: ◯

145. Տեղադրի՛ր համապատասխան բառը և կարդա՛ ստացված նախադասությունները:

Դեղձը _____ է:	(կենդանի, միրգ)
Աղվեսը _____ կենդանի է:	(խորամանկ, վախկոտ)
Վագրը _____ կենդանի է:	(վայրի, ընտանի)

146. Լրացրու նախադասության բաց թողնված բառը:

Հայաստան, հայեր, բարձրահասակ

Հայկ Նահապետը _____ էր:

Հայկի հաջորդները կոչվեցին _____:

Հայերի երկիրը կոչվեց _____:

147. Որոշիր ամիսը և գրիր:

Սկսվում է տարին: _____

Տարվա ամենակարճ ամիսն է: _____

Աշնան վերջին ամիսն է: _____

Գարնան առաջին ամիսն է: _____

148. Հանելուկի պատասխան-բառում գրիր անհրաժեշտ տառը: Կարդա՛ այն:

Շրջել է նա աշխարհ-աշխարհ
Չի ունեցել քուն ու դադար
Ստեղծել է այբուբենը՝ ____աշ կրոց (Շ, ՀՀ, Ն)
Մեր մեծ հույսն ու ապավենը:

149. Նախադասությունների մեջ տեղադրիր համապատասխան բառերը:

Առավոտյան խոտերի վրա նստել էր _____: (ձող, ցող)

Անահիտը _____ է ուտում: (նուռ, դուռ)

Շնիկը քնել է Անիի _____: (գրքում, գրկում)

150. Շարունակիր քառատողը:

Սիրում եմ քեզ,
Հայոց լեզու,

_____

_____

ա) Ես ձեռքս առա
Իմ դասագիրքը:

բ) Մայրիկիս պես
Անուշ ես դու:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

հեծանիվ զամբյուղ խաչքար

կատու գնացք թութակ ծաղիկ

Հավելված 2

ակ ծա քա հե

նոն ղիկ գն նիվ

մա դակ տիտ նոց ծա

Հավելված 3

երեք ամպ որսորդ անձրև արև տերև

Հավելված 4

մեղու | արջ | ելակ | եղնիկ | ոզնի

արև | անձրև | աղվես | տերև

Հավելված 5